ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատված է ՀԱԱՀ գիտական խորհրդի կողմից “03” 06. 2016 թ. (արձ. № __)	Վավերացնում եմ ՀԱԱՀ ռեկտոր _____ Ա. Թարվերդյան “06” 06. 2016թ.

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ

ԵՐԵՎԱՆ 2016

ՈՐԱԿԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ, ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Մշտադիտարկումը ինֆորմացիայի համակարգված հավաքագրումն ու մշակումն է, որը կարող է օգտագործվել ուսումնասիրվող գործընթացի բարելավման համար՝ որպես շահակիցների հետ հետադարձ կապի գործիք նոր նախագծերի մշակման, կրթական ծրագրերի և կրթական ծառայությունների գնահատման և ռազմավարության վերանայման և բարելավման համար:

Կրթական ծառայությունների որակի մշտադիտարկումը և գնահատումը կազմված է հետևյալ փուլերից՝

1. Տարբեր կատեգորիաների շահակիցների բավարարվածության մշտադիտարկում:
2. Մշտադիտարկման ենթակա օբյեկտների աուդիտ (ստուգում), այսինքն կրթական գործընթացի բաղադրյալների (գործընթացների և ենթագործընթացների) ստուգումներ՝ անհամապատասխանությունների բացահայտման համար:
3. Մշտադիտարկման և ստուգումների արդյունքների մշակում, ներկայացում և վերլուծություն, հաշվետվությունների և առաջարկությունների պատրաստում:
4. Շահագրգիռ կողմերի և որոշում կայացնող մասնագետների տեղեկացում՝ բացահայտված անհամապատասխանությունների վերաբերյալ:
5. Անհամապատասխանությունների վերացմանն ուղղված ծրագրերի մշակում և կառավարող փոխազդեցությունների ձևավորում այդ ծրագրերի իրականացման համար, որակի բարելավման համար:

Շահակիցների բավարարվածության մակարդակը չափվում է, համադրելով որակի նպատակները և ցուցանիշները շահակիցների սպասումներին:

Մշտադիտարկման ենթակա օբյեկտը ուսումնասիրվում է ըստ հավաքագրված տվյալների:

Մշտադիտարկվող տվյալների հավաքագրումը կարող են իրականացվել հարցումների տեսքով կամ այլ եղանակներով:

Հարցումը կարելի է կատարել էլեկտրոնային փոստով, լսարանում, ֆոկուս-խմբերի միջոցով:

Հարցման արդյունքները պետք է հասանելի լինեն համալսարանի բոլոր շահակիցներին:

Համալսարանում չափման և մշտադիտարկման առարկա կարող է հանդիսանալ՝

1. Ուսումնառողների որակը (օրինակ առաջադիմությունը),
2. դասավանդող անձնակազմի որակը և հմտությունները,
3. ռեսուրսների և նրանց ապահովման որակը,
4. կրթական ծառայությունների գործունեության որակը,
5. կառավարման համակարգի գործունեության որակը:

Ստուգման և չափման են ենթարկվում գործընթացների բնութագրերը, նրանց անընդհատությունը, արդյունավետությունը և այլն:
Տվյալների հավաքագրումը պետք է կատարվի ըստ նախապես մշակված պլանի և ձևաչափերի: Ըստ դրա կազմվում է անհամապատասխանությունների վերացման ժամանակացույց-պլան (ըստ գործընթացի առանձնահատկության):
Մշտադիտարկման արդյունքում նախատեսվում են ուղղիչ գործողություններ և նախազգուշացնող գործողություններ, որոնք համարվում են որակի բարձրացման գործընթացի բաղադրիչ մասը:
Որակի մշտադիտարկման, վերլուծության և գնահատման մեթոդաբանության ընդանրացված նկարագրությունը ներկայացվում է ձևաչափի միջոցով (հավելված)՝ ըստ քայլերի հաջորդականության:

ՀԱՐՑՄԱՆ ԹԵՐԹԻԿՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ

Հարցման թերթիկները մշակելիս անհրաժեշտ է ուշադրություն դարձնել հարցերի բովանդակությանը և տեղադրման հաջորդականությանը:
Տվյալ գործընթացը պահանջում է՝

1. հստակություն. դրված հարցերի առավելագույն ձևով պարզ և հասկանալի ներկայացումը,
2. խուսափել բազմաթիվ պատասխանների ներառումից,
3. բաց հարցերի մշակում՝ շահակիցների կարծիքը ստանալու համար բուհի կրթության որակի մասին,
4. բոլոր բանալի հարցերի ներառում՝ ստացված ինֆորմացիայի հավաստելիության ապահովման համար,
5. բացառել հարցերը, որոնք կխանգարեն իրական վիճակի բացահայտմանը:

Հարցման թերթիկներում հարցերը անհրաժեշտ է բաժանել խմբերի՝

1. բավարարվածությունը ուսումնական գործընթացից,
2. բավարարվածությունը բուհում տարվող գիտահետազոտական գործընթացներից,
3. բավարարվածությունը առկա ռեսուրսներից:

Հարցման թերթիկը պետք է ունենա հետևյալ կառուցվածքը՝

1. հարցման բնույթը և նպատակը,
2. ո՞ւմ կողմից է իրականացվում,
3. հարցերի ներկայացումը «պարզից –բարդ՝ կառուցվածքով,
4. բաց հարցեր,
5. տվյալների հրացմանը մասնակցողի վերաբերյալ (սեռ, տարիք և այլն):

Հարցերի պատասխանները պետք է մշակել գնահատման աճման կամ նվազման կարգով՝ հարցաթերթիկների արդյունքների վերլուծության արդյունավետությունը ապահովելու նպատակով:

ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Տվյալ խնդիրը լուծելու նպատակով նախ և առաջ անհրաժեշտ է կատարել լրացված հարցման թերթիկների հարցերի վիճակագրական վերլուծություն հարցերի առանձին խմբերի համար (Excel կամ SPSS ծրագրի միջոցով):

Այնուհետև կատարվում է մշակված տվյալների վերլուծություն, հիմնվելով տարբեր տիպի դիագրամների վրա:

Վերլուծության հիման վրա կայացվում են որոշումներ կրթական որակի բարելավման ուղղությամբ ըստ առավել թույլ կողմերի:

Հավելված Ա

ԱՆԿԵՏԱՎՈՐՄԱՆ ԱԼԳՈՐԻԹՄ



Հավելված Բ

ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ՁԵՎԱԹԵՐԹ

Մշտադիտարկման փուլեր	Մշտադիտարկման փուլի բնութագրումը
Նպատակներ՝ ընդհանուր նպատակ, կոնկրետ նպատակ(ներ)	Տվյալ փուլում բերվում է ընդհանուր նպատակի բնութագիրը, որը կարող է լինել գլոբալ՝ արտահայտված ըստ բնութագրիչների: Ընդհանուր նպատակը կարող է հեռացվել ժամանակի ընթացքում: Կոնկրետ նպատակները պետք է կապված լինեն անմիջականորեն բացահայտված անհամապատասխանությունների հետ: Կոնկրետ նպատակը ենթադրում է որոշակի ժամանակահատվածում կատարված գործողությունները՝ չափել, մշակել, հետազոտել:
1. Մշտադիտարկման խնդիրներ	Կոնկրետ նպատակին հասնելու համար տվյալ փուլում ձևավորվում են խնդիրները, որոնք անհրաժեշտ է լուծել: Նպատակների հետ կապված խնդիրները համարակալվում են ըստ ուսումնասիրվող նպատակի: Խնդիրները անհրաժեշտ է ձևակերպել հստակ և որոշակիորեն, քանի որ նրանց հիման վրա ձևավորվում է մշտադիտարկման պլան-ծրագիրը, պլանավորվում են հստակ միջոցառումներ և անհրաժեշտ ռեսուրսներ:
2. Միջոցառումներ	Յուրաքանչյուր խնդրի լուծման համար անհրաժեշտ է իրականացնել միջոցառումներ: Յուրաքանչյուր միջոցառում կարելի է համարակալել ըստ նպատակի և խնդրի:
3. Ռիսկեր	Նկրագրվում են արտաքին միջավայրի գործոնների հետ կապված ռիսկերը, որոնք անկառավարելի են: Ադպիսի գործոնները անհրաժեշտ է հաշվի առնել, և հնարավորության դեպքում պլանավորել նրանց բացասական ազդեցության չեզոքացումը:

4. Մշտադիտարկման աշխատանքային խումբ	*Աշխատանքային խմբի ղեկավար և կատարողներ*: Այստեղ կարող են ձևակերպված լինեն աշխատանքային խմբի մասնագետների նկատմամբ դրվող հատուկ պահանջները:
5. Մշտադիտարկման անցացման ժամկետ (ներ)	Մշտադիտարկման սկիզբ _____ Մշտադիտարկման վերջ _____
6. Մշտադիտարկման գործընթացի լոկալացում	Նշվում է մշտադիտարկման անցկացման վայրը, պայմանները, սահմանափակումները և այլն՝ կախված նպատակներից, խնդիրներին և կոնկրետ միջոցառումներից:
7. Մշտադիտարկման կարգավիճակ	Առաջնային (մշտադիտարկման տվյալ տեսակը անցկացվում է առաջին անգամ): Ուղղիչ (տվյալ օբյեկտը արդեն ենթարկվել է մշտադիտարկման և որակի գնահատանը, սակայն հերթական մշտադիտարկման փուլում կրկնակի անգամ բացահայտվել է անհամապատասխանություն):
8. Մշտադիտարկման նախորդ փուլի բնութագիր	Նախորդ փուլի մշտադիտարկման արդյունքների առկայության դեպքում տվյալ բաժնում բերվում է նրա կարճ բնութագիրը, տեղ գտած անհամապատասխանությունները:
9. Մշտադիտարկման նախորդ փուլում ընդունած որոշումներ	Հաջորդ փուլի մշտադիտարկման համար բերվում են նախորդ հետազոտությունների հիմնական արդյունքները, ընդունված ուղղիչ գործողությունները:
10. Մշտադիտարկման օբյեկտը և առարկան	Յուրաքանչյուր խնդրի համար նշվում են մշտադիտարկման օբյեկտը և առարկան, բերվում են նրանց բնութագրերը, առանձնահատկությունները: Ուղղիչ փուլի համար նույնպես հաղորդվում են մշտադիտարկման ենթական օբյեկտի փոփոխությունները նախորդ փուլի նկատմամբ:
11. Որակի ցուցիչներ	Եթե մշտադիտարկման անցկացման համար գոյություն ունեն որակի ցուցիչներ, ապա նրան բերվում են նկարագրության, կանոնների տեսքով:

12. Նպատակային խմբեր	Նպատակային խմբերի նկարագրությունը մշտադիտարկման կարևոր մասն է: Ընդ որում դրվում են հստակ պահանջներ մշտադիտարկման իրականացնող խմբի առջև (նկարագրություն):
13. Մշտադիտարկման մեթոդներ	Բերվում են հստակ մշտադիտարկման իրականացման, չափման, որակի գնահատման մեթոդներ: Նրանք նույնպես կարող են կապված լինել մշտադիտարկման նպատակների և խնդիրների հետ:
14. Ինֆորմացիայի հավաքագրման, մշակման և պահպանման մեթոդներ	Նշվում են ինֆորմացիայի հավաքագրման, մշակման և պահպանման մեթոդները ըստ անցկացվող մշտադիտարկման առանձնահատկության, ինչպես նրա նպատակների և խնդիրների:
15. Մշտադիտարկման գործիքներ	Մշտադիտարկման գործիքներ կարող են լինել հարցման թերթերը, հատուկ աղյուսակները ծրագրային միջոցները, անհարժեշտ համակարգչային միջոցները: Գործիքները կարող են բերվել միասին կամ ըստ նպատակի և խնդիրների:
16. Մշտադիտարկման ռեսուրսներ	Պետք է նկարագրվեն բոլոր անհրաժեշտ ռեսուրսները դրված նպատակներին հասնելու համար: Ռեսուրսները կարող են նշվել կոնկրետ նպատակի կամ խնդրի համար:
17. Որակի մշտադիտարկման, վերլուծության և գնահատման իրականացման պլան-գրաֆիկ	Ձևավորված և լրացված մշտադիտարկման մեթոդաբանության աղյուսակի հիման վրա կազմվում է մորիթորինգի, վերլուծության, որակի գնահատման գործընթացի պլան–գրաֆիկը՝ նշելով խնդիրների, միջոցառումների կատարման հաջորդականությունը, ժամանակային սահմանափակումները: Պլան-գրաֆիկի հիմնական բաժիններն են՝ նպատակը (գլոբալ, մասնավոր(լոկալ)), խնդիր(ներ), միջոցառում(ներ), կատարման ժամկետը, ռեսուրսներ, մշտադիտարկման ցուցանիշներ և նրա արդյունավետության ցուցիչներ, ինֆորմացիայի ներկայացման ձևեր, պատասխանատուներ, կատարողներ:

18. Հաշվետվություն	Ձևավորվում են պահանջները հաշվետվության կազման, նրա կառուցվածքի նկատմամբ: Որոշվում է ղեկավար անձնակազմի անվանացուցակը, որոնց պետք է փոխանցվի հաշվետվությունը: Հաշվետվության պահանջներում անհրաժեշտ է նկարագրել, թե մշտադիտարկման արդյունքների հաշվետվությունը համալսարանի որ կատեգորիայի անձնակազմի համար է նախատեսված:

ԿԱՐԳ

ՀԱԱՀ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ

Ընդհանուր դրույթներ

Համալսարանի գործունեության որակի մշտադիտարկման անհրաժեշտությունը պայմանավորված է՝

- Կրթական համակարգի առջև դրվող պահանջներով (ENQA ստանդարտներ),
- Կրթական գործունեության որակը հասատող ամբողջական ինֆորմացիայի կարեվորությամբ,
- Կրթական գործունեության որակին վերաբերող ինֆորմացիայի վերլուծության և գնահատման անհրաժեշտությամբ:

Նպատակներ և խնդիրներ

Մշտադիտակման նպատակն է ստանալ հավաստի և օբյեկտիվ ինֆորմացիա և տվյալներ համալսարանի ամբողջ գիտակրթական գործունեության, գործընթացների կամ առանձին ֆունկցիայի կատարման որակի վերաբերյալ՝ կրթական գործունեության որակի բարձրացման և կրթական համակարգի հետագա զարգացման համար:

Մշտադիտարկման խնդիրներն են՝

- Ուսումնական գործընթացի որակի վերլուծությանը և օբյեկտիվ գնահատմանը վերաբերող կազմակերպական միջոցառումների իրականացում:
- Համալսարանի որակի կառավարման համակարգի գործառնման և կրթական ծառայությունների վերաբերյալ տվյալների և ինֆորմացիայի պարբերաբար հավաքագրում և վերլուծություն:
- Որակի կառավարման համակարգի փաստաթղթային բազային ստուգում:
- Որակի կառավարման համակարգի արդյունավետության վերաբերյալ ինֆորմացիայի համակարգում:
- Որակի ներքին աուդիտների կազմակերպում:
- Ստորաբաժանումների գործընթացների վերլուծություն:
- Գործընթացների որակին վերաբերող ինֆորմացիայի հասանելիության ապահովումը շահակիցներին:

Մշտադիտարկման ֆունկցիաներն են՝

- Կրթության որակի մշտադիտարկման մեթոդաբանական ապահովում:
- Համալսարանի կրթական և գիտահետազոտական գործունեության որակի ցուցանիշների մշտադիտարկում (անընդհատ հետազոտություններ, գնահատում և փոփոխությունների կանխատեսում):
- Կրթության որակի մշտադիտարկման արդյունքների վերլուծություն:
- Ներքին աուդիտների արդյունքների վերլուծություն:

- Համալսարանի որակի կառավարման համակարգի և առանձին գործընթացների վերլուծություն:

Մշտադիտարկման վերջնարդյունքները՝

- Բարելավմանը ուղղված որոշումների կայացում:
- Ուսումնական գործընթացի կատարելագործում:
- Կրթական ծառայությունների որակի բարելավում:
- Գիտական գործունեության կատարելագործում:

Գործունեության կազմակերպում

Մշտադիտարկման անցկացման կազմակերպումը ենթադրում է.

- Մշտադիտարկման խնդիրների որոշում:
- Մշտադիտարկման ենթակա կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության, գործընթացների, առանձին գործողությունների համակարգում:
- Ուսումնառողների առաջադիմության վերաբերյալ ինֆորմացիայի հավաքագրում և վերլուծություն:
- Դասախոսական անձնակազմի մասնագիտական հմտությունների մակարդակի որոշում:
- Կրթական ծառայությունների գործունեության որակին վերաբերող ինֆորմացիայի հավաքագրում և վերլուծություն:
- Գիտահետազոտական ոլորտի գործունեության որակին վերաբերող ինֆորմացիայի հավաքագրում և վերլուծություն:
- Մշտադիտարկման արդյունքների վերլուծություն, ամփոփում և հրապարակում:

Մշտադիտարկումը անցկացվում է ըստ սույն կարգի և Որակի մշտադիտարկման, վերլուծության և գնահատման մեթոդաբանության:

Նորմատիվային փաստաթղթեր

1. ՀԱԱՀ կանոնադրություն,
2. ՀԱԱՀ որակի ապահովման քաղաքականություն,
3. ՀԱԱՀ որակի ապահովման ձեռնարկ,
4. ՀԱԱՀ Որակի մշտադիտարկման, վերլուծության և գնահատման մեթոդաբանություն,
5. Մշտադիտարկման անցկացման ինֆորմացիոն քարտեզ:

Կ Ա Ր Գ

Կրթական ծրագրի իրականացման մոնիթորինգի

Մոնիթորինգի նպատակն է գնահատել ծրագրի մատուցման որակն ու ակադեմիական ստանդարտները ծրագրի իրականացման ընթացքում և նախաձեռնել բարելավող անհրաժեշտ գործողություններ:

Մոնիթորինգի խնդիրներն են՝

- գնահատել ծրագրի/առանձին դասընթացների սահմանված նպատակների և ակնկալվող ելքային արդյունքների ձեռք բերման ընթացքը և արդյունավետությունը,
- բացահայտել ծրագրի թույլ կողմերը ու իրականացման դժվարությունները և առաջարկել անհրաժեշտ ճշգրտումներ ծրագրում և դասընթացներում,
- գնահատել դասավանդման և ուսումնառության գործընթացների արդյունավետությունը, ուսուցման մեթոդների և տեխնոլոգիաների արդիականությունը, բացահայտել ռեսուրսային կարիքները,
- գնահատել ծրագրի հիմնական քանակական բնութագրիչների (համակազմ, առաջադիմություն, շրջանավարտություն, համապատասխան աշխատատեղերի ձեռք բերում) համապատասխանությունը նախօրոք սահմանված թիրախային ցուցանիշներին:

Մոնիթորինգի հիմնական միջոցները՝

- ուսանողների՝ ծրագրից բավարարվածության ուսումնասիրություն, որն արտացոլում է ուսանողների բավարարվածության մակարդակը ծրագրի բովանդակության և մատուցման տարբեր ասպեկտներից, ուսանողների տեսանկյունից առավել կարևոր (հաջողված) և առավել անբավարար (անհաջող, ավելորդ) ծրագրային տարրերը, հետևաբար նաև՝ ակնկալվող ծրագրային փոփոխությունները,
- շրջանավարտների և գործատուների՝ ծրագրից բավարարվածության ուսումնասիրություն, որն արտացոլում է ծրագրի համապատասխանությունը տվյալ մասնագիտության աշխատատեղերի պահանջներին, ծրագրի արդիականությունը, ծրագրի հեռանկարները կադրային պահանջարկի տեսանկյունից,
- արտաքին փորձաքննություն, որը կոչված է անկախ և օբյեկտիվ գնահատական տալու մշակված ակադեմիական ստանդարտների (ելքային արդյունքների) ապահովման վիճակին և ծրագրի մատուցման որակական ցուցանիշներին,
- ծրագրի հիմնական քանակական բնութագրերի վերլուծություն՝ սահմանված վիճակագրական ցուցիչների միջոցով, որն ընդգրկում է ծրագրի ընդունելության, համակազմի, շրջանավարտության, ռեսուրսների, ուսանողների առաջադիմության և ատեստավորման ցուցանիշների ուսումնասիրությունը:

Մոնիթորինգի արդյունավետ իրականացման համար կարևորվում է անհրաժեշտ տեղեկատվական հոսքի ապահովումը տեղեկատվության աղբյուրների (ուսանողների հարցումներ, արտաքին փորձաքննության հաշվետվություններ, վիճակագրական ցուցիչներ և այլն) և մոնիթորինգն իրականացնող կառույցների միջև:

Մոնիթորինգի գործընթացը սովորաբար իրականացվում է տարեկան պարբերականությամբ և ընդգրկում է համալսարանի բոլոր կրթական ծրագրերը և դրանց դասընթացները և ավարտվում է որակի մոնիթորինգի հաշվետվությունների կազմումով՝ ծրագրի, ստորաբաժանման (մասնասաճյուղի, դեպարտամենտի, ֆակուլտետի), համալսարանի մակարդակներում:

Որակի մոնիթորինգի հաշվետվությունները ներառում են գործողությունների պլաններ ծրագրերի առանձին տարրերի բարելավման ուղղությամբ:

Կրթական ծրագրերի/մասնագիտությունների մեծ բազմազանության պայմաններում ոչ բոլոր ծրագրերի մոնիթորինգն է ավարտվում ամենամյա պաշտոնական հաշվետվություններով:

Մոնիթորինգի ինքնուրույն տարեկան հաշվետվություններ պահանջվում են՝

- նոր կրթական ծրագրերի առաջին տարվա համար,
- համատեղ կրթական ծրագրերի համար,
- ռիսկային գործոնով կրթական ծրագրերի համար, որոնց վերաբերյալ մտահոգիչ փաստեր են հայտնաբերվել ուսանողների կամ արտաքին փորձագետների կողմից,
- ընդունելության և առաջադիմության ցածր ցուցանիշներ ունեցող ծրագրերի համար:

Մոնիթորինգը սովորաբար իրականացվում է յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբին և ընդգրկում է նախորդ ուսումնական տարվա բնութագրական տվյալների հավաքումը և համեմատական վերլուծությունը: